



«ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ն

## ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ

«ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հիմնադրվել է 2006թ. և ֆինանսական ծառայություններ է մատուցում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և Լեռնային Ղարաբաղում: Կազմակերպության գլխամասային գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում:

**ՊԱՇՏՈՆ՝** Վարկային գործակալ  
**ՂԵԿԱՎԱՐ՝** Մասնաճյուղի կառավարիչ  
**ՎԱՅՐԸ՝** ՀՀ ք. Նոյեմբերյան

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Իրականացնել նախապատրաստական աշխատանքներ վարկառուների հետ,
- գնահատել վարկառուների գործարարությունը և իրականացնել մոնիտորինգ,
- կազմակերպել վարկերի տրամադրման և հավաքագրման աշխատանքները,
- կազմել և վարել վարկային փաստաթղթերն ու գործերը,
- աջակցել գրասենյակի վարչական և գործառնական կառավարմանը,
- աջակցել կազմակերպության առաքելության իրագործմանն ու ռազմավարության զարգացմանը,
- ներկայացնել պահանջվող հաշվետվությունները,
- իր իրավասության սահմաններում կատարել կազմակերպության քաղաքականության, կանոնակարգերի և ներքին իրավական այլ ակտերի պահանջները:

### ՊԱՀԱՆՋՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բարձրագույն կրթություն (ցանկալի է տնտեսագիտական),
- նախապատվությունը տրվելու է ֆինանսաբանկային համակարգում առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձ ունեցող հավակնորդներին,
- ինքնուրույն և թիմում աշխատելու ունակություն,
- կազմակերպչական ձիրք, հաղորդակցվելու և բանակցելու կարողություններ,
- ֆինանսական և վիճակագրական տվյալներ վերլուծելու ունակություններ,
- հայերեն լեզվի գերազանց իմացություն,
- համակարգչից օգտվելու բավարար գիտելիքներ և հմտություններ:

### ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Մանրամասն լրացված (ծննդյան տարեթիվ, փաստացի բնակավայր, հեռախոսահամար, կրթություն, աշխատանքային փորձ և այլն) ինքնակենսագրություն (ռեզյումե):

### ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Փաստաթղթերն ընդունվում են մինչև **2018թ. մայիսի 16-ը:**

Հետաքրքրված անձինք կարող են դիմել հետևյալ հասցեներից որևէ մեկով.

ՀՀ ք. Նոյեմբերյան, Զ. Անդրանիկի փողոց, 6 և 6/2, «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Նոյեմբերյանի ներկայացուցչություն կամ [vacancy@aregak.am](mailto:vacancy@aregak.am) էլ. փոստով: Պարզաբանումների համար զանգահարել (0266) 2-30-90 հեռախոսահամարով:

Խնդրում ենք որպես վերնագիր նշել «Ալավերդու մասնաճյուղի/Նոյեմբերյանի ներկայացուցչության վարկային գործակալ» պաշտոնի անվանումը, հակառակ դեպքում Ձեր դիմումը կարող է չդիտարկվել:

Հարցազրույցի հրավիրվելու են փաստաթղթային փուլում ընտրված հավակնորդները: